

ապուլթիւնը, որ նաւին գլուխ կանգնողները նկատի կու-
նենան ապագայի դատաստանը:

Այս կողմից՝ Սուքիաս եպիսկոպոսի «Նամակը» անար-
ժէք գրուածք չէ:

Էմմ. Բաե. Նազարեանց.



Ազգային Եկեղեցի. Կ. Վ. Բագու, 1907 թ. 48 եր.
գիցն է 20 կ.

Այս տետրակի ծագումը կապուած է մի քարոզի հետ,
որ հեղինակը խօսել է մարտի 27-ին Բագում՝ Լուսա-
ւորչի տօնի առթիւ: Մի քանի բարեկամներ ցանկութիւն
են յայտնել տպագրուած տետրակի այդ քարոզը, իսկ սո-
ցանից մէկը՝ Արժ. Ղևոնդ ա. քահանայ Տէր Աստուա-
ծատրեանցը՝ իւր վրայ է առել տպագրութեան ծախքը:
Եւ ահա հեղինակը ի կատարումն այդ ցանկութեան, գրի
է առել և տպագրութեան յանձնել այն:

Կ. Վ. այս տետրակում մաքառում է Հայոց եկեղեցու
և հոգեւորականութեան մէջ կղերական ոգի որոնողների
դէմ, մի թիւր և մտացածին գաղափար, որ վերջին տա-
րիներս արհեստական կերպով դրուած է հրապարակի
վերայ և հետզհետէ նստել է մի կարգի գործիչների գըլ-
խում: Նա մի համառօտ տեսութեամբ պարզում է արե-
ւելեան և արևմտեան եկեղեցիների ծագումն ու բնորոշ
յատկութիւնները և ապա համեմատելով Հ. եկեղեցու հետ,
ցոյց է տալիս, որ այստեղ կղերականութեան գաղափարը
ծագել և զարգանալ չէր կարող՝ ազգային բնաւորութեան,
կրթական ոգու և հալածական վիճակի պատճառով: Հ.
եկեղեցին ազգային է, որովհետեւ նրա ծագման և զար-
գացման մէջ պետական-քաղաքական գաղափարները դեր

չեն կատարել, ինչպէս օրթոդոքս եկեղեցու մէջ և ոչ նա ձգտել է իւրացնել քաղաքական իշխանութեան ղեկավարութիւնը ազգերի վերայ, ինչպէս կաթոլիկ եկեղեցին: Ընդհակառակ է, եկեղեցին զուտ ազգային բնաւորութիւն է ստացել, իւրացնելով հայ լեզուն և քրիստոնէութիւնը կապելով ազգային սովորութիւնների և կեանքի հետ: Հ. եկեղեցու նուիրապետութիւնը կազմուել է հայ նախարարական տոհմերի և թագաւորի յարաբերութեան նմանութեամբ, սկզբում նոյն իսկ ժառանգական: Հ. եկեղեցին իւր հաստատութեան օրերից լուսաւորութեան և կրթութեան աղբիւր է հանդիսացել. նա գիր ու դպրութիւն է ստեղծել, օտար գիտութիւնները պատուաստել մեր մէջ և ախոյեաններ պատրաստել իւր տնկախութիւնն ու ինքնուրոյնութիւնը պաշտպանելու օտարների դէմ: Հիմնել է վարդապետարաններ, ուր սերունդներ են կրթութուել, ձեռագիրներ արտագրուել, մատենադարաններ կազմուել. իսկ վերջին ժամանակներս աշխատել է ամէն տեղ դպրոցներ բանալ, զոհելով նոյն իսկ իւր բարեգարդութիւնը: Հայ վարդապետներն աշխատել են իրենց գիտութիւնն ու հմտութիւնն աւանդել ոչ միայն եկեղեցու պաշտօնեաներին, այլ և աշխարհիկ անձանց: Կաթոլիկ եկեղեցու մէջ հոգեւորականութիւնն է միայն Ս. Գրքի հասկացողութեան և վարդապետութեան աղբիւրը, իսկ օրթոդոքս եկեղեցու մէջ՝ որպէս խորհուրդների սրբաշնագործ պաշտօնեայ, աւելի ծածկուած է խորհրդաւորութեան վերարկուով: Հ. եկեղեցու մէջ այս գաղափարները իշխող չեն հանդիսացել, «հոգեւորականը իւր ժողովրդի զաւակն է եղել» ուստի և կղերականութեան մասին խօսք լինել չի կարող: Վերջապէս այս հոգու զարգացման միանգամայն խոչնդոտ էր Հ. եկեղեցու հալածական վիճակը, որին ամենից առաջ նորա պաշտօնեաներն են ենթարկուել. Հայոց հայրապետները մի կողմից հայ իշխանների հաշտութեան միջնորդ են եղել, միւս կողմից արտաքին բռնութիւններն են աշխատել մեղմել, որով լի է մեր պատմութիւնը:

Հեղինակը իւր գրութիւնը վերջացնում է շեշտելով այն մտար գաղափարներն ու յարձակումները, որ վերջերս սովորական է դարձել մեր եկեղեցու և նորա պաշտօնէութեան դէմ. ազգային եկեղեցին մեր հայութեան միութեան հիմքն է դարձել պատմութեան ընթացքում ամեն տեղ ցրուած ազգութեան համար. կործանելով այդ գաղափարն ու հաստատութիւնը ինչ ենք դնում նորա տեղ. Նա կարօտ է միայն բարեկարգութեան, որից յետոյ դարձեալ մի կենդանի և փրկարար հաստատութիւն կդառնայ, ինչպէս մինչև այժմ. Յանկանք, որ այս գրքոյկը ծառայէ իւր նպատակին՝ պարզելու մտքերի շփոթութիւնը և ջրելու մեր ազգային եկեղեցու մասին տարածուող թիւր գաղափարները:

Գ. Վ.

